

Մկրտիչ Մեհեղիշեան. ա. մրցակ. Տաճկ. ա. Չխկ. երաժշտութեան. ք. Պատմ. ք. Գաղղ. ընթ. ք. Հայ. ք. Գաղղ.

Գոհացուցիչ՝ Կրօնագիտութեան, Թուարանութեան.
Առաւ 6 մրցանակ. ա. աստիճանի վկայագիր:

Ը. ԴԱՍԻՆ (ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՂԱԿԱՆ)

Գեորգ Աձեմեան. ա. մրցանակ Աշխարհագրութեան. ա. Թուարանութեան. ա. Իրագիտութեան. ա. Հայերէնի. ա. Գաղղ. (որուն համար ընդունեցաւ նաև գեղեցիկ լաբով մը՝ պարզև Արիստ. էֆ. Ի Ազարեան). ա. Գեղագրութեան. ա. Գծագրութեան. ա. Գաղղ. ընթ. ք. Կրօնագիտութեան.

Գոհացուցիչ՝ Չախական երաժշտութեան.
Առաւ 9 մրցանակ.

Գեորգ Սախա. ա. մրցակ. Գաղղ. ք. Կրօնագիտութեան. ք. Աշխարհագրութեան. ք. Թուարանութեան. ք. Հայերէնի. ք. Գաղղ. ընթ.

Գոհացուցիչ՝ Իրագիտութեան, Չխկն երաժշտութեան.
Առաւ 6 մրցանակ.

Ահաւասիկ 65 աշակերտաց մէջէն ամենայաջողակներն:

Մէկուկէս ժամու գրօուցիչ հանդէսէ մը ետքը, սկսան հանդիսատեսք վարժարանիս քակն ու սրահները ցրուիլ՝ զովացուցիչ ըմպելեօք կազդուրելու. եւ կէս ժամէն մրցանակներով ծանրաբեռնեալ կը մեկնէին աշակերտք զուարթաղէմ՝, նոր ոյժ եւ ոգի առնելով՝ երկամսեայ հանգստէ մը ետքը քաջութեամբ իրենց ուսմունքն շարունակելու:

Թէ վկայագրաց քաշխման հետ կցեալ այս փորձիկ հանդիսութիւնս ի՛նչ մեծ ազդեցութիւն ունի ուսանող աշակերտաց վրայ, հարկ չէ հոս լայնագոյնս նկարագրել. վարժարանաց վարչութիւններն գիտեն զայս, քանի որ “Նիւթական”, քաջալերութիւնն՝ ժանկուտոյն խթան կը լրայ քազմութեան առջև քաջագոյն հանդիսանալու. այս է անշուշտ որ գործնական Գաղղիացիք միշտ նոր շուք եւ զարդ կը յաւելուն իրենց դպրոցական հանդէսներուն: Բայց ուրախալին այն է որ զամ՝ քան զգամ՝ կը կրճատուին յայտագիրներէն այն առեղորդ մասունքն որոնք ստոյգ է, պատիւ կը թերեմ վարժարանաց, քայց ոչինչ իւրիք կը նպաստեն մանկուտոյն յուսմունս յառաջադիմութեան:



Հ Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ի Ն Ի Ա Ն Ո Ւ Ա Ը Թ Ք Մ Ը

“Հանրէս Ա՛սորեայ” ուսումնաթերթն՝ 1891 Յունիս ամսատետրին մէջ, մետաքսի վրայ ոսկեթել բանուած, հայկական ճարտարութեան եւ արուեստի վերաբերեալ, եւ հին շուրջառի մը վրայէն հանուած, խաչաձեւ արձանագրութիւն մը հրատարակեց, որուն բուն իսկ բանուածքն այժմ՝ կը պահուի Վիեննայի Միսիթարեան թանգարանին մէջ:

Այդ խաչաձեւ արձանագրութեան հրատարակութեան առթիւ “Հանրէս” Յարգ. Խմբագրութիւնն հրաւիրեց հնասէր ընթերցողքն, որ սոյնօրինակ եւ այլ հայկական ճար-

տարութեան մնացորդաց վրայ ծանօթութիւնք տրուին եթէ գտնուին, աւելցնելով միանգամայն՝ թէ այսպիսիք մեծ յարգ ունին ուսումնականաց առջև, հոգ չէ՝ եթէ այն մնացորդք ամենաշնչին բլբան:

Այս հրաւերն մեր կողմանէ ալ կրկնելով հանդերձ, կու գանք մենք եւս պատկերաւ հրատարակել նմանօրինակ խաչաձեւ արձանագրութիւն մը, հայկական արուեստի եւ ճարտարութեան մնացորդ բանուածք մը, նոյնպէս մետաքսեայ նիւթի մը վրայ ոսկեթել բանուած, եւ որ գրեթէ երկուք ու կէս դարու հնութիւն մը ունի: Սա երկու մասամբ կրնայ նշանաւոր համարուիլ, նախ՝ արձանագրութիւն մըն է, եւ նուիրուած է կեսարիոյ Ս. Աստուածածնի Մայր Եկեղեցւոյն, եւ երկրորդ՝ կեսարիայ հայկական